



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

### Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«ՎԱՐՏԳԵՁ ԳԱՍՊԱՐԻԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ (17.06.1998թ. ՀՕ-247) 207-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ, 6-ՐԴ, 7-ՐԴ ՄԱՍԵՐԻ, 213-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 2-ՐԴ ԿԵՏԻ, 204.34-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԵՎ 2-ՐԴ ՄԱՍԵՐԻ, ԵՎ ՆՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔԻ ՀԻՄՔՈՎ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԲՈՂՈՔԻ ԲԱՎԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒՑ ՀԵՏՈ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՍԿՍԵԼՈՒ/ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆՈՂ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԲԱՑԻ ԵՎ/ԿԱՄ ԴՐԱՆ ԻՐԱՎԱԿԻՐԱՌ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ ՏՐՎԱԾ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանը քննության առնելով «Վարտգեղ Գասպարիի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (17.06.1998թ. ՀՕ-247) 207-րդ հոդվածի 1-ին, 6-րդ, 7-րդ մասերի, 213-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 204.34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, և նոր հանգամանքի հիմքով Վճռաբեկ դատարանի կողմից բողոքի բավարարման և համապատասխան որոշումը վերացնելուց հետո գործի քննությունը համապատասխան դատարանում սկսելու/հարուցելու դատավարական կարգը սահմանող օրենսդրական բացի և/կամ դրան իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը՝ ՀՀ Սահմանադրության համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով Սահմանադրական դատարանի դատական կազմի առաջարկությունը **Պ Ա Ր Ձ Ե Ց**.

1. Դիմողը Սահմանադրական դատարան ներկայացրած իր դիմումում խնդրել է. «Որոշել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (17.06.1998թ. ՀՕ-247) 207-րդ հոդվածի 1-ին, 6-րդ, 7-րդ մասերի, 213-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 204.34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, և նոր հանգամանքի հիմքով Վճռաբեկ դատարանի կողմից բողոքի բավարարման և համապատասխան որոշումը վերացնելուց

հետո գործի քննությունը համապատասխան դատարանում սկսելու/հարուցելու դատավարական կարգը սահմանող օրենսդրական բացի և/կամ դրան իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը՝ ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 6-րդ, 61-րդ (1-ին մաս), 63-րդ (1-ին մաս), 75-րդ, 78-րդ, 79-րդ, 80-րդ, 81-րդ հոդվածներին համապատասխանության հարցը»:

2. Դիմողը գտնում է, որ վիճարկվող դրույթները, ինչպես նաև դրանց հետ համակարգային կապի մեջ գտնվող դատավարական օրենսդրության իրավակարգավորումները չեն նախատեսում նոր հանգամանքի հիմքով Վճռաբեկ դատարանի կողմից բողոքի բավարարման և համապատասխան որոշումը վերացնելուց հետո գործի քննությունը համապատասխան դատարանում սկսելու/ հարուցելու դատավարական կարգ:

Դիմողի կարծիքով՝ հիշյալ իրավակարգավորումը և/կամ իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանությունը չի ապահովում իրավական որոշակիության սկզբունքը, քանի որ որևէ կերպ որոշակիացված չէ այն ընթացակարգը և գործողությունների հաջորդականությունը, որոնք պետք է ձեռնարկի շահագրգիռ անձը: Ընդ որում, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը չի սահմանում բողոքաբերի համար պարտավորություն վերաքննիչ բողոքը կրկին վերաքննիչ դատարան ներկայացնելու պարտականություն և չի սահմանում դրա համար որևէ ընթացակարգ և ժամկետ:

Դիմողի կարծիքով՝ վիճարկվող իրավադրույթներն ի զորու չեն երաշխավորելու Սահմանադրությամբ սահմանված հիմնարար իրավունքների և սկզբունքների նպատակները, դրանք և համապատասխան կառուցակարգերը պիտանի և բավարար չափով որոշակի չեն եղել, որպեսզի հիմնարար իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

Դիմողի պնդմամբ՝ իր նկատմամբ կիրառված իրավադրույթներն այնքանով, որքանով չեն նախատեսում այնպիսի ընթացակարգեր և համապատասխան պարտականություններ, որոնք կբավարարեն իրավական որոշակիության սկզբունքին, իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությամբ և/կամ օրենսդրական բացի առկայությամբ հակասում են ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 61-րդ (1-ին մաս), 63-րդ (1-ին մաս), 75-րդ, 78-րդ, 79-րդ, 80-րդ հոդվածներին:

3. Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29 և 69-րդ հոդվածների պահանջներով և ելնելով խնդրո առարկա անհատական դիմումի և կից փաստաթղթերի նախնական ուսումնասիրության արդյունքներից գործի քննության ընդունումը՝ Սահմանադրական դատարանի կողմից ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

դիմողի նկատմամբ Վճռաբեկ դատարանի՝ **վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշումները** կայացվել են 2018 թվականի ապրիլի 11-ին: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (17.06.1998թ. ՀՕ-247) 241<sup>2</sup>-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վճռաբեկ դատարանի՝ վճռաբեկ բողոքը մերժելու մասին որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման: **Վճռաբեկ դատարանի** նշյալ ակտերը կայացվել են «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքն ուժի մեջ մտնելուց հետո: Հետևաբար, դիմողի կողմից Սահմանադրական դատարան դիմելու համար նախատեսված ժամկետի հաշվարկը պետք է կատարվի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի տրամաբանության շրջանակներում, ըստ որի՝ անհատական դիմումները կարող է Սահմանադրական դատարան ներկայացնել ֆիզիկական կամ իրավաբանական անձը դատական պաշտպանության բոլոր միջոցները սպառելուց՝ **վերջնական դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան վեց ամիս հետո**: Այսինքն, խնդրո առարկա գործի շրջանակներում դիմողի կողմից Սահմանադրական դատարան դիմելու համար նախատեսված ժամկետն ավարտվել է 2018 թվականի հոկտեմբերի 12-ին, մինչդեռ դիմողի դիմումը փոստային ծառայություն մուտքագրվել է նույն թվականի հոկտեմբերի 15-ին: Հետևաբար, դիմողը բաց է թողել Սահմանադրական դատարան դիմելու համար նախատեսված վեցամսյա ժամկետը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 69-րդ հոդվածի 3-րդ մասով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

«Վարտգեզ Գասպարիի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (17.06.1998թ. ՀՕ-247) 207-րդ հոդվածի 1-ին, 6-րդ, 7-րդ մասերի, 213-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 204.34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, և նոր հանգամանքի հիմքով Վճռաբեկ դատարանի կողմից բողոքի բավարարման և համապատասխան որոշումը վերացնելուց հետո գործի քննությունը համապատասխան դատարանում սկսելու/հարուցելու դատավարական կարգը սահմանող օրենսդրական բացի և/կամ դրան իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննության ընդունումը մերժել:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՆԱԽԱԳԱՀ**

9 նոյեմբերի 2018 թվականի  
ՍԴԱՈ-81



**Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ**